Արձանագրություն N 13

Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 9-ի

Օրակարգ

1. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագով ամրագրված կանանց և տղամարդկան իրավահավասարությանը վերաբերվող նախապայմանների մասին

*/ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ **Ֆ.Բերիկյան** /*

2. «Հայաստանում երեխայի սեռի կանխակալ ընտրություն» ծրագրի ընթացքի մասին

*/«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» վերլուծական կենտրոնի փորձագետ **Վ.Ասատրյան**/*

3. Այլ հարցեր և վերջին զարգացումների ներկայացում հանձնաժողովի անդամների կողմից

/հանձնաժողովի անդամներ/

4. Ելույթներ, մտքերի փոխանակում

Մասնակցեցին

Ֆ. Բերիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ ***(հանձնաժողովի նախագահ)***
Կ.Սուջյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի պետ
Ա.Վարդանյան	ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետի տեղակալ
Ա.Գասպարյան	Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի իրավական ապահովման և վիճակագրության վարչության գլխավոր մասնագետ
Գ. Հայրապետյան	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ
Ա. Հովհաննիսյան	ՄԱԿ-ի զարգացման ծրագրի պատասխանատու
Ա. Գալստյան	«Մարդկային զարգացման միջազգային

Վ.Ասատրյան	կենտրոն» ՀԿ գործադիր տնօրեն
Ա. Թանաշյան	«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» վերլուծական կենտրոնի փորձագետ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ ***(հանձնաժողովի քարտուղար):***

Սույն թվականի հունիսի 9-ին տեղի ունեցած Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի նիստը բացեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ **Ֆ.Բերիկյանը:** Նա հանձնաժողովի անդամների հետ համաձայնեցրեց օրակարգը և համաձայն դրա առաջին կետի անցավ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագի ներկայացմանը: Նա նշեց, որ 2015 թվականի դեկտեմբերի 29-ին ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման 2016-2018 թվականների համաձայնագիրը, որի համաձայն շահագրգիռ գերատեսչությունները սահմանված ժամկետներում պետք է ապահովեն իրենց իրավասությունների շրջանակներից բխող հատուկ պայմանների կատարումը: Պարոն Բերիկյանը մասնավորապես անդրադարձավ վերոհիշյալ համաձայնագրով ամրագրված 4-րդ՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը վերաբերող «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման գործուն մեխանիզմներ և ընտանեկան/ սեռի հիմքով բռնության ու ոտնձգության զոհերի պաշտպանություն» հատուկ պայմանին, ըստ որի պետությունը պարտավորվում է.

2016 թվականին՝

Ընտանեկան բռնության վերաբերյալ առանձին օրենսդրության ընդունում՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային, թիվ 19 ընդհանուր առաջարկությանը և «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիային (Ստամբուլի կոնվենցիա) համապատասխան:

2017 թվականին՝

Ուղղորդման բազմոլորտ մեխանիզմի ստեղծում՝ ժամանակին և համապատասխան աջակցության ծառայությունների միջոցով (բժշկական, սոցիալական, իրավաբանական, պաշտպանողական, հոգեբանական) ընտանեկան և կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմքով բռնության զոհերին օժանդակելու համար:

Հայաստանի 3 մարզերում և մայրաքաղաքում գործող, պետության կողմից ֆինանսավորվող՝ աջակցության կենտրոններ, որոնք ընտանեկան սեռի հիմքով

բռնության առնվազն 750 զոհերի մատուցում են հետևյալ ծառայությունները. տրավմայի դեպքում աջակցություն և խորհրդատվական աջակցություն, զոհերին և նրանց ընտանիքներին գործուն օգնության տրամադրում (այդ թվում՝ թեժ գիծ), արտակարգ իրավիճակներում անվտանգ և ապահով կացարանի տրամադրում՝ առաջնային հիմնական անհատական կարիքների բավարարման և պետական ծառայություններից օգտվելու հնարավորությամբ՝ մինչև անմիջական վտանգի վերացումը:

2018 թվականին՝

Հայաստանի բոլոր մարզերում և մայրաքաղաքում գործող, պետության կողմից ֆինանսավորվող՝ աջակցության կենտրոններ, որոնք ընտանեկան և սեռի հիմքով բռնության առնվազն 2 000 զոհերի մատուցում են հետևյալ ծառայությունները. վնասվածքի դեպքում աջակցություն և խորհրդատվական աջակցություն, զոհերին և նրանց ընտանիքներին գործուն օգնության տրամադրում (այդ թվում՝ թեժ գիծ), արտակարգ իրավիճակներում անվտանգ և ապահով կացարանի տրամադրում՝ առաջնային հիմնական անհատական կարիքների բավարարման և պետական ծառայություններից օգտվելու հնարավորությամբ՝ մինչև անմիջական վտանգի վերացումը:

Պարոն Բերիկյանը տեղեկացրեց, որ վերոգրյալ պարտավորությունների կատարման ուղղությամբ ձեռնարկվել են քայլեր. ՀՀ արդարադատության նախարարությունը «Ընտանեկան բռնության» մասին օրենքի նախագիծ մշակելու նպատակով ձևավորել է աշխատանքային խումբ, որի կազմում ներգրավվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության, ՀՀ ֆինանսների նախարարությունների, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ԿԱ ոստիկանության և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներ: Նա նշեց, որ «Ընտանեկան բռնության» մասին օրենքի նախագծի մշակումը նախատեսված է նաև ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 303-Ն որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության գործողությունների ծրագրի 40-րդ կետով:

Պարոն Բերիկյանը հանձնաժողովի անդամներին և հրավիրված ՀԿ-ների ներկայացուցիչներին տեղեկացրեց, որ նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել ՀՀ 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծրագրով պահանջվող լրացուցիչ նոր նախաձեռնության՝ «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցություն» միջոցառման իրականացման գծով հայտը, ըստ որի նախատեսվում է 2017 թվականին հանրապետության երեք մարզերում (Կոտայք, Արարատ, Սյունիք) ընտանկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ստեղծում և գործարկում, իսկ 2018 թվականին՝ Երևան քաղաքում և բոլոր 10 մարզերում ընտանկան բռնության ենթարկված անձանց աջակցության կետրոնների գործարկում: Նա նշեց, որ «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցություն» միջոցառման մշակման ընթացքում ուսումնասիրվել է ընտանեկան բռնության ոլորտում աշխատող ՀԿ-ների ծրագրերը և ըստ այդմ ՀՀ ՄԺԾ 2017-2019 թվականների ծրագրով առաջարկվել է միջոցառման համար 2017 թվականին նախատեսել 17,456.25 հազ. դրամ՝ հանրապետության երեք մարզերում ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ստեղծման և գործարկման ծախսերի համար, իսկ 2018-2019 թվականներին՝

յուրաքանչյուր տարի 60,368.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքում և հանրապետության բոլոր 10 մարզերում ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների գործարկման ծախսերի համար:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ հանդես եկավ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ Գ.Հայրապետյանը, առաջարկելով «Ընտանեկան բռնության» մասին օրենքի նախագծի մշակման աշխատանքներին ներգրավել ոլորտի հասարակական և միջազգային կառույցներին, որոնք իրենց փորձով ր գիտելիքներով կարող են աջակցել գործընթացին: Նա նաև տեղեկացրեց, որ Եվրոպական Միության կողմից ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակին է վերապահվել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման 2016-2018 թվականների համաձայնագրով ամրագրված կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը վերաբերող հատուկ պայմանի կատարման աջակցության և մոնիտորինգի ծրագրի իրականացումը:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» վերլուծական կենտրոնի փորձագետ **Վ.Ասատրյանը**: Նա ներկայացրեց Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ և Սեյվ դը չիլդրըն, «Արմավիրի զարգացման կենտրոն» և «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ների հետ համագործակցությամբ իրականացվող **«Հայաստանում երեխայի սեռի կանխակալ ընտրություն»** Ծրագրի 2015 թվականի գործողություններն ու ձեռքբերումները:Ներկայացվեց, որ 2015թվականի ընթացքում իրականացվել են աշխատանքների 3 ուղղություններով.

Իրազեկման աշխատանքներ՝ հիմնախնդրի, դրա հետևանքների ու պատճառների, երևույթի կանխարգելման միջոցների վերաբերյալ.

- Կազմակերպվել է հանդիպում-քննարկումներ ՀՀ մարզերի քաղաքային համայնքներում: Քննարկումներին մասնակցել են շուրջ 150 քաղաքացիներ: Համայնքային հանդիպումները կշարունակվեն նաև 2016 թվականին:
- Պատրաստվել է սոցիալական 2 հոլովակները մշակվել և հրապարակվել են: դրանց Հեռարձակումն իրականացվում է համացանցով, ՀՀ մարզային և կենտրոնական հեռուստա ընկերությունների հետ համագործակցությամբ:
- Մշակվել և տպագրվել են 5 պաստառներ և 5 էջանշաններ: Պաստառները փակցվել են մարդաշատ վայրերում, բժշկական հիմնարկներում, մետրոյում: Էջանշանները բաժանվելում են քաղաքացիներին ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների ընթացքում, գործընկերների հետ համագործակցության շրջանակներում:
- ՀՀ կենտրոնական և մարզային հեռուստաընկերությունների հետ համագործակցությամբ մեկնարկել են հաղորդումների պատրաստումն ու իրականացումը՝ 2015թ. նկարահանվել և հեռարձակվել է շուրջ 10 հեռուստա և ռադիոհաղորդում:
- ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ, մշակվել են հոգեբանական բնույթի տեղեկատվական թերթիկներ ծնողների համար սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների հետևանքների, անկախ սեռից երեխայի իրավունքների մասին: Թերթիկները տպագրվել են 10 000 օրինակ և

տարածվում են բնակչության շրջանում, ինչպես նաև թերթիկները տեղադրվել են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքում՝ (www.moh.am «ուղեցույցներ» դարանում):

- Ֆեյսբուք սոցիալական ցանցում 2015 թվականին բացվել է «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» խումբը, որին անդամակցում են շուրջ 720 անձինք: (Հղումը՝ https://www.facebook.com/groups/409020602617094/): Համացանցում և խմբի էջի վրա տեղադրվում են ծրագրային գործողությունների վերաբերյալ բոլոր նյութերը, թեմային վերաբերող հայաստանյան և միջազգային մամուլում և այլ աղբյուրներում հրապարակվող նյութերը, նորություններ և հրապարակումները տեսանյութերը, որի շրջանակներում պարբերաբար տեղի են ունենում քննարկումներ:

Պատասխանատու կառույցների կարողությունների զարգացման աշխատանքներ՝ իրենց գործառույթներն ու լիազորություններն այս խնդրում արդյունավետ կերպով իրականացնելու, գործուն միջամտություն ունենալու նպատակով.

- Մարզերում և Երևան քաղաքում իրազեկման և քարոզչական աշխատանքների իրականացման նպատակով, պետական կառավարման տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության կառույցների, լրատվամիջոցների և կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավմամբ ձևավորվել են «*Տեղական մասնակցության և ոչխտրականության» Փորձի և գիտելիքի փոխանակման ցանցի (Փոխցանց)* խորհրդատվական աշխատանքային 11 խմբեր, որոնց կազմում ընդգրկվել են ավելի քան 380 անձինք: Մարզային բոլոր խմբերի հետ իրականացվել են երկօրյա 2 դասընթացներ:
- Փոխցանցի անդամների մասնակցությամբ տեղական առանձնահատկությունները հաշվի առնելով մշակվել են քարոզչական գործիքներ ի նախագծեր (6 փաթեթ մարզերում և 1 փաթեթ Երևան քաղաքում):
- Համայնքներում ձևավորվել են 22 քաղաքացիական ակտիվ խմբեր: Նրանք ձեռք են բերել գործունեությունը համակարգելու, թեմայի շուրջ քննարկումներ և տարբեր միջոցառումներ անցկացնելու համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և նյութեր:
- ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համագործակցությամբ նախապատրաստվել է ծննդօգնության հիվանդանոցային ծառայություններ մատուցող հաստատությունների աշխատակիցների, այդ թվում՝ նշված ոլորտի ղեկավարության, երեխայի սեռը որոշելու նպատակով ուլտրաձայնային հետազոտություն կատարող անձնակազմի և գինեկոլոգների համար հատուկ մեթոդաբանություն և ձեռնարկ: Այն տպագրվել է 300 օրինակով: Սեմինարները մեկնարկել են ՀՀ մարզերում:

Քաղաքականության, իրավական կարգավորման, ընթացակարգերի մշակման աշխատանքներ՝

Ծրագրի շրջանակներում իրականցրել է սոցիալական և առողջապահության ոլորտների քաղաքականության վերաբերյալ ուսումնասիրություն, այդ թվում ուսումնասիրվել են ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության որոշումներ և նպատակային ռազմավարական ծրագրերի, նախարարների հրամաններ: Ինչպես նաև ուսումնասիրվել է խնդրի վերաբերյալ միջազգային փորձը և կատարվել վերլուծություններ: Դրանց հիման վրա մշակել է առաջարկությունների փաթեթ և իրականացվել են դրա շուրջ քննարկումներ:

Վ.Ասատրյանն իր ներկայացման վերջում շնորհակալություն հայտնեց բոլոր շահառու և շահագրգիռ կողմերին, մասնավորապես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության նախարարությունների, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գործընկերներին շահագրգիռ համագործակցության և Ծրագրի գործողություններում անմիջական ու արդյունավետ մասնակցության համար:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել Ֆ.Բերիկյանի հաղորդումը:
2. Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել Վ.Ասատրյանի հաղորդումը:
3. Իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ տեղեկացնել հանձնաժողովին առաջիկա նիստերի ընթացքում:

Հանձնաժողովի նախագահ՝ **Ֆ. Բերիկյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ա.Թանաշյան**
/10.06.2016թ./